ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

" 22 " հուլիսի 2015թ № 99-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-Ի N27-Ա, 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի N119-Ա, 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N183-Ա, 2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի N12-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2015 թվականի հունիսի 22-ի ,, Աշոտ Ասրյանին ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ նշանակելու մասին,, N144-Ա հրամանը, **որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2008 թվականի մարտի 22-ի ,,Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողով ստեղծելու մասին,, N27-Ա որոշման հավելվածում, 2011 թվականի հուլիսի 11-ի ,,Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանում երեխայի տարիքը որոշող Սյունիքի մարզային հանձնաժողովի կազմը և լիազորությունները հաստատելու մասին N119-Ա որոշման N1 հավելվածում, 2013 թվականի դեկտեմբերի 24-ի ,,Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանում գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի կանոնադրությունը և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին,, N183-Ա որոշման N2 հավելվածում, 2015 թվականի փետրվարի 9-ի ,,Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի համայնքներում 2015 թվականի ընթացքում վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի անհատական կազմը, հսկողության բնագավառները և ժամանակացույցը հաստատելու մասին,, N12-Ա որոշման N1 հավելվածում ,,Կառլեն Կոզմանով,, բառերը փոխարինել ,,Աշոտ Ասրյան,, բառերով:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ հուլիսի 22
ք.Կապան